



MICHELLE BAASS  
DIRECTOR



GAVIN NEWSOM  
GOVERNOR

(Insert Date)

## Կարևոր նորություններ առողջության ապահովագրության վերաբերյալ

Հարգելի նպաստառու

Մենք լավ լուր ունենք Ձեզ համար: Հնարավոր է, որ շուտով Դուք նոր առողջապահական նպաստների ստանալ: Ձեր restricted scope «Medi-Cal»-ը կարող է փոխվել full scope «Medi-Cal»-ի:

Նոր «Older Adult Expansion»-ի պահանջների համաձայն՝ **2022 թ. մայիսի 1-ից** full scope «Medi-Cal» է տրամադրվելու 50 տարեկան և ավելի մեծ տարիքի այն անձանց, որոնք իրավունակ են «Medi-Cal» ստանալու: Նշանակություն չունի, թե Դուք ներգաղթողի ինչ կարգավիճակ ունեք:

### Ինչպե՞ս իմանամ, որ full scope «Medi-Cal»-ով ես ավելի շատ առողջապահական նպաստներ եմ ստանալու:

2022 թ. ապրիլին Դուք փոստով նամակ կստանաք: Այն Ձեզ կտեղեկացնի, թե արդյոք Դուք կարող եք full scope «Medi-Cal» ստանալ: Դրանում նշված կլինի նաև, թե երբվանից Դուք կսկսեք լրացուցիչ նպաստներ ստանալ:

### Full scope «Medi-Cal»-ով ես ավելի շատ առողջապահական ծառայություններ կստանամ:

Այո: «Medi-Cal»-ն անվճար կամ ցածր գներով առողջության ապահովագրություն է տրամադրում California-ի որոշ բնակիչների: Full scope «Medi-Cal»-ը տարբերվում է Ձեր այժմյան restricted scope «Medi-Cal»-ից: Restricted scope «Medi-Cal»-ը միայն որոշ ծառայությունների համար է վճարում: Այն չի վճարում այնպիսի բաների համար, ինչպիսիք են դեղերը և նախնական բուժօգնությունը:

Full scope «Medi-Cal»-ը վճարում է հետևյալ ծառայությունների համար և ավելին.

- բուժում ակոհոլի և թմրադեղերի կախվածությունից,
- ատամնաբուժական օգնություն,

- շտապ բուժօգնություն,
- ընտանիքի պլանավորում,
- ոտքերի խնամք,
- լսողական սարքեր,
- բուժօգնություն,
- դեղեր, որոնք Ձեր բժիշկը կպատվիրի,
- բժշկական պարագաներ,
- հոգեբուժական օգնություն,
- անձնական խնամողի և այլ ծառայություններ, որոնք օգնում են մարդկանց խուսափել ծերանոցից,
- անհրաժեշտության դեպքում մասնագետներին այցելելու ուղեգրեր,
- ստուգումներ, որոնք Ձեր բժիշկը կպատվիրի,
- փոխադրամիջոց՝ բժշկին կամ ատամնաբույժին այցելելու և դեղատնից Ձեր դեղերը վերցնելու համար,
- ակնաբուժական օգնություն (ակնոց):

Եթե այժմ Դուք հղիության հետ կապված «Medi-Cal» ունեք, ապա կարող եք օգտվել բժշկական առումով անհրաժեշտ բոլոր այն ծառայություններից, որոնք մտնում են «Medi-Cal»-ի ապահովագրական ծածկույթի մեջ:

«Medi-Cal»-ի մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարդացեք այս նամակի հետ ուղարկված «Frequently Asked Questions»-ը (FAQ):

### **Ինչպե՞ս եմ ես առողջապահական ծառայություններ ստանալու:**

Full scope «Medi-Cal» ունեցողների մեծ մասն իրենց առողջապահական ծառայությունները կստանա «Medi-Cal»-ի որևէ «Managed Care Plan»-ի միջոցով: «Medi-Cal»-ի «Managed Care Plan»-ն առողջապահական ծրագիր է: Այն իր սպասարկման տարածքում աշխատում է բժիշկների, հիվանդանոցների, դեղատների և այլ առողջապահական սպասարկողների հետ: Նրանք Ձեզ բուժսպասարկում կտրամադրեն:

«Medi-Cal»-ի որևէ «Managed Care Plan»-ում ընդգրկվելու դեպքում՝ Դուք կարող եք որոշ առողջապահական ծառայություններ ստանալ Fee-For-Service (regular) «Medi-Cal»-ի միջոցով: Դրանց թվում են դեղատնային ծառայությունները, substance use disorder-ների բուժումը և ատամնաբուժական ծառայությունները:

«Medi-Cal»-ի «Managed Care Plan»-ների՝ Ձեր տրամադրության տակ եղած տարբերակները կախված են այն շրջանից, որում Դուք ապրում եք: Որոշ շրջաններում մեկ ծրագիր է գործում: Այլ շրջաններում մեկից ավելի ծրագիր է գործում, որ կարող եք

ընտրել: Մենք Ձեզ նամակ կուղարկենք այն մասին, թե ինչ ծրագրեր կարող եք ընտրել: Ձեր «Health Care Options»-ի մասին ավելին կարող եք իմանալ՝

- **Հեռախոսով:** Զանգահարեք **1-800-430-4263**՝ երկուշաբթի-ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 6-ը: TDD-ից/TYY-ից օգտվողները պետք է զանգահարեն 1-800-430-7077: Զանգն անվճար է:
- **Առցանց:** Այցելեք <https://www.healthcareoptions.dhcs.ca.gov/>:

### **Ինչպե՞ս եմ ես առողջապահական ծառայություններ ստանալու, եթե իմ «Medi-Cal»-ը Share of Cost-ով (SOC) է:**

Եթե Դուք SOC ունեք, ապա կստանաք full scope «Medi-Cal»՝ SOC-ով: Եթե Դուք SOC ունեք, Դուք առողջապահական ծառայությունները կստանաք Fee-For-Service (regular) «Medi-Cal»-ի միջոցով: Ձեզ անհրաժեշտ կլինի «Medi-Cal»-ի որևէ «Managed Care Plan» ընտրել:

### **Ես պե՞տք է պահեմ իմ «Medi-Cal»-ի Benefits Identification Card-ը (BIC):**

Այո: Դուք պետք է պահեք Ձեր BIC-ը: Դա նարնջագույն կակաչների պատկերով կամ կապույտ ու սպիտակ ձևավորմամբ պլաստիկ քարտ է: Այն Ձեզ պետք կլինի, երբ Դուք օգտվեք full scope «Medi-Cal»-ից: Եթե Ձեզ նոր BIC է հարկավոր, զանգահարեք Ձեր շրջանային գրասենյակ:

Ձեր բժշկին այցելելիս կամ բժշկական և ատամնաբուժական այցելությունների ժամանակ միշտ Ձեզ հետ վերցրեք Ձեր BIC-ը: Երբ Դուք ընդգրկվեք «Medi-Cal»-ի որևէ «Managed Care Plan»-ում, Ձեր նոր ծրագիրը Ձեզ քարտ կտա: Հարկավոր է երկու քարտն էլ ցույց տալ, երբ Դուք այցելեք Ձեր բժշկին, ատամնաբույժին, դեղատուն կամ որևէ այլ բժշկական սպասարկողի:

### **Կարի՞ք կա՞ «Medi-Cal»-ի նոր դիմում լրացնելու:**

Ոչ: Դուք արդեն restricted scope «Medi-Cal» ունեք, ուստի, full scope «Medi-Cal»-ի նոր դիմում լրացնելու անհրաժեշտություն չկա:

Եթե Դուք փոստով «Medi-Cal»-ը թարմացնելու փաթեթ ստանաք, լրացրեք այն և վերադարձրեք: Օգնության համար կարող եք զանգահարել Ձեր շրջանային գրասենյակ:

### **Ինչպե՞ս այլ ձևաչափով նյութեր ստանամ:**

Դուք կարող եք «Medi-Cal»-ի Ձեր նպաստների մասին գրավոր տեղեկություններ ստանալ մեկ այլ ձևաչափով: Այն կարող է լինել Բրայլի գրատիպով, խոշորատառ տպագրությամբ, ձայնագրություն կամ տվյալներ պարունակող CD-ով կամ որևէ այլ ձևաչափով, որը կօգնի Ձեզ հասկանալ և կարդալ նամակները կամ լրացնել Ձեզ ուղարկված փաթեթը: Պատվիրելու համար՝

- Այցելեք <https://afs.dhcs.ca.gov>: Հետևեք ցուցումներին և տարբեր ձևաչափ ընտրեք:
- Զանգահարեք **1-833-284-0040** (California Relay 711)՝ երկուշաբթի-ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 5-ը, բացի ազգային տոներից: Զանգն անվճար է:
- Դիմեք Ձեր տեղական շրջանային գրասենյակ:

### **Ի՞նչ անել, եթե ինձ օգնություն է հարկավոր մեր այլ լեզվով:**

Եթե Ձեզ օգնություն է հարկավոր անգլերենից տարբեր որևէ լեզվով, այս նամակին կից ուղարկված հեռախոսահամարների ցուցակում Դուք կգտնեք անվճար լեզվական օգնության ծառայությունների հեռախոսահամարները: Դուք կարող եք օգտվել բանավոր թարգմանչի ծառայություններից, որը Ձեզ կօգնի կարդալ այս նամակը:

### **Որտեղի՞ց կարող եմ ավելին իմանալ կամ օգնություն ստանալ:**

#### **«Medi-Cal»-ի մասին ավելին իմանալու համար՝**

Զանգահարեք «Department of Health Care Services»-ի (DHCS) «Medi-Cal»-ի օգնության հեռախոսագծով՝ **1-800-541-5555**՝ երկուշաբթի-ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 5-ը, բացի ազգային տոներից: Զանգն անվճար է:

#### **«Medi-Cal»-ի «Managed Care Plan»-ների մասին տեղեկություններ ստանալու համար՝**

Զանգահարեք «Health Care Options»՝ **1-800-430-4263** հեռախոսահամարով՝ երկուշաբթի-ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 6-ը: TDD-ից/TYY-ից օգտվողները պետք է զանգահարեն 1-800-430-7077: Զանգն անվճար է:

Կամ այցելեք DHCS-ի կայքը՝ <https://bit.ly/older-adult-expansion> հասցեով:

#### **Ներգաղթի և «Medi-Cal» ծրագրի մասին հարցերի դեպքում՝**

«Department of Health Care Services»-ը (DHCS) չի կարող պատասխանել ներգաղթի կամ «public charge»-ի մասին հարցերին:

«California Department of Social Services»-ը (CDSS) վճարում է համապատասխան որակավորում ունեցող՝ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների, որպեսզի վերջիններս ծառայություններ տրամադրեն California-ում բնակվող ներգաղթողներին: Կա կազմակերպությունների ցուցակ, որը կգտնեք <https://bit.ly/immigration-service-contractors> հասցեում:

Ներգաղթի մասին տեղեկությունների և ռեսուրսների համար այցելեք «California's Immigrant Guide»-ի կայքը՝ <https://immigrantguide.ca.gov/> հասցեով:

«Public charge»-ի մասին տեղեկությունների համար կարդացեք «California Health and Human Services Agency Public Charge»-ի ուղեցույցը՝ <https://bit.ly/calhhs-public-charge-guide> հասցեով:

Շնորհակալություն,

Department of Health Care Services